2021

ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

ՀՖԿՍՊԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ 1-ԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) իր կրթական գործընթացների կազմակերպման և կրթական ծառայությունների տրամադրման գործընթացներում առաջնորդվում է կրթության որակի և հասարակության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության սկզբունքներով:

Ինչպես նախատեսված է ՀՖԿՍՊԻ զարգացման ռազմավարական ծրագրում (***ՌԾ նպատակ 1. Խնդիր 1.1),*** բուհում իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը սահմանված նպատակներին գնահատվում է կրթական ծրագրերի, դրանց բաղադրիչների պարբերական մշտադիտարկման, ինքնագնահատման միջոցով, որը նպաստում է հետագա ռազմավարական ուղղությունների ձևավորմանը և կրթական գործընթացների բարելավմանը:

Կարևոր է նշել, որ 2019-2020 ուսումնական տարվանից ՀՖԿՍՊԻ–ում մեկնարկել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության մշակման և հաստատման գործընթացները: Ընդհանուր առմամբ՝ 2019-2020 ուսումնական տարում կրթական գործընթացը միտված է եղել ՄԿԾ վերափոխումների իրականացմանն ու որակյալ բուհական կրթական համակարգի նոր նպատակադրումների սահմանմանն ու իրագործմանը:

ՀՖԿՍՊԻ ռազմավարական ծրագրին համահունչ և արտաքին գնահատման արդյունքում, ինչպես նաև վերջինիս երաշխավորությունների հիման վրա կազմված բարելավման ծրագրին համապատասխան իրականացվել են մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարեփոխումների փուլային աշխատանքներ:

Արդյունքում՝ մասնագիտության կրթական ծրագրերում կրթական նոր նպատակներ են սահմանվել, մշակվել են սովորողների կրթական վերջնարդյունքները ձևավորող նոր ռազմավարություններ, փորձարկվել են նորարարական մեթոդներ և գործիքներ՝ դրանց արդյունավետ իրականացման համար:

Այս համատեքստում 2019-2020 ուսումնական տարվանից ուսանողների և դասախոսների հետ իրականցվող սոցհարցումների, ֆոկուս խմբային հետազոտությունների միջոցով վերհանված խնդիրների մի մասը անդրադառնում էր օտար լեզուների ուսուցման արդյունավետությանը՝ ընդգծելով ուսանողների շրջանում օտար լեզվի, մասնավորապես միջազգային կրթագիտական լեզվի՝ անգլերենի տիրապետման անբավարար մակարդակը:

Հաշվի առնելով ներքին շահակիցներից ստացված առաջարկները՝ մասնավորապես սովորողների օտար լեզվի իմացությունը բարելավելու և շարժունության միջազգային ծրագրերում ուսանողների ներգրավվածությունը խթանելու նպատակով՝ 2020-2021 ուսումնական տարվա կրթական ծրագրերում ավելացվել է ռուսերենի/անգլերենի դասավանդման և ուսումնառության ծավալը. օտար լեզուների դասավանդումը կազմակերպվում է 4 կիսամյակում՝ նախկինում նախատեսված 1 կիսամյակի փոխարեն:

Կարևորելով ՀՖԿՍՊԻ գործունեության ցանկացած տիրույթում իրականացվող բարելավիչ գործողությունների և քայլերի վերաբերյալ բուհի ներքին շահակիցների հետադարձ կարծիքի կանոնավոր ուսումնասիրումն ու արդյունքների գնահատումը՝ ՀՖԿՍՊԻ Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ ՈԱԲ) անցկացրել է առցանց անանուն հարցում բակալավրի կրթական ծրագրերի առաջին կուրսի ուսանողների շրջանում (***առցանց հարցումը անցկացվել է հունիսի 17–ից 18–ը***) Ուսանողական հարցումը անդրադառնում է հիմնականում հետևալ հարցերին.

- ✓ մինչև ՀՖԿՍՊԻ ընդունվելը և ներկա պահին (1-ին կուրսի ավարտին) անգլերեն և ռուսերեն լեզուներով ազատ հաղորդակցվելու, գրելու և կարդալու հմտությունների գնահատումն ուսանողների կողմից,
- ✓ նշված լեզուներին տիրապետելու հմտությունների զարգացման վրա ազդող գործոնները,
- ✓ ՀՖԿՍՊԻ բակալավրիատի 1-ին կուրսում անգլերեն և ռուսերեն լեզուներ դասավանդող դասախոսների արհեստավարժության գնահատումն ուսանողների կողմից,
- ✓ նշված լեզուներից գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը բուհում,
- ✓ անգլերեն և ռուսերեն լեզուներից ուսանողների նախընտրած քննական/գնահատման մեթոդները,
- ✓ ուսանողների առաջարկությունները ՀՖԿՍՊԻ–ում անգլերեն և ռուսերեն լեզուների դասավանդման որակի հետագա բարձրացման ուղղությամբ:

Հարցմանը մասնակցել է ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի 173 ուսանող[1], որը կազմում է առաջին կուրսեցիների 64 տոկոսը, և այս ընտրանքային համախմբությունը հնարավորություն է տալիս 95% վստահության միջակայքի և 5% սխալի սահմանի կիրառմամբ ընդհանրացումներ կատարելու հետազոտության թիրախային խմբի՝ ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի բոլոր ուսանողների մասին:

Հարցմանը մասնակցած ուսանողական կազմի ընդհանուր նկարագիրը

Հարցվածների ֆակուլտետը

Գծապատկեր 1



[1] Մարզչամանկավարժական ֆակուլտետում ուսանողների թիվը կազմում է 197 ուսանող, իսկ ԱՏՍՏԿ ֆակուլտետում՝ 74 ուսանող:

«Ի՞նչ որակավորում եք ստանալու ՀՖԿՍՊԻ-ում»

Գծապատկեր 2



Հարցվածների սեռը

Գծապատկեր 3



ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև բուհ ընդունվելը և ներկա պահին (1-ին կուրսի ավարտին) անգլերեն և ռուսերեն լեզուներով ազատ հաղորդակցվելու, գրելու և կարդալու հմտությունների գնահատումն ուսանողների կողմից

«Ներկա պահին անգլերեն լեզվի Ձեր իմացության մակարդակը ինչպե՞ս կգնահատեիք»
Գծապատկեր 4



Գծապատկերից երևում է, որ այս պահին՝ 1-ին կուրսի ավարտին ՀՖԿՍՊԻ ուսանողների ինքնագնահատականը անգլերեն լեզվի տիրապետման վերաբերյալ ավելի հաճախ (25-37%-ի մոտ) նշվել է որպես «միջին», կամ՝ «տարրական գիտելիքների տիրապետում»: Ուսանողների 21%-ը այդ հմտությունները գնահատում են «լավ», իսկ իսկ 8-ից 15%-ը՝ «գերազանց»: Կան նաև սակավաթիվ ուսանողներ (2-5%), որոնք համարում են, որ անգլերեն ոչինչ չգիտեն:

Ստորև ներկայացված 5-րդ գծապատկերում երևում են ռուսաց լեզվի վերաբերյալ ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի ուսանողների ինքնագնահատականները: Ռուսերենի խոսակցական հմտությունները հարցվածների 44%-ը «միջին» է գնահատել, իսկ հարցվածների 11-20%-ը «գերազանց» գնահատել ռուսերենի իմացությունը:

«Իսկ ներկա պահին ռուսաց լեզվի Ձեր իմացության մակարդակը ինչպե՞ս կգնահատեիք»
Գծապատկեր 5



Մինչև ՀՖԿՍՊԻ ընդունվելը և ներկա պահին՝ 1-ին կուրսի ավարտին այս երկու լեզուներին տիրապետելու հմտությունների համեմատական վերլուծությունը ավելի պատկերավոր է ներկայացված Գծապատկեր 6-ում, որտեղ նշված լեզուների վերաբերյալ ուսանողների տված ինքնագնահատականների թվային համարժեքի թվաբանական միջիններն են հաշվարկված ըստ 1-5 սանդղակի (1-ը համապատասխանում է «ոչինչ չգիտեի/չգիտեմ» տարբերակին, 2-ը՝ «ունեմ/ունեի տարրական գիտելիքներ», 3-ը՝ «միջին», 4-ը՝ «լավ», իսկ 5-ը՝ «գերազանց գիտելիքներ»):

Գծապատկեր 6



Ուսանողների ինքնագնահատման համաձայն, մինչև ՀՖԿՍՊԻ ընդունվելը երկու լեզուների նրանց միջին իմացությանը տրվել է մոտ 2,5 միավոր, այսինքն՝ տարրականից միջին իմացության մակարդակ, իսկ մեկ տարի անց (այժմ՝ 1-ին կուրսի ավարտին) այդ ընդհանուր գնահատականը բարձրացել է 3,2-ի, այսինքն՝ այն միջինից մի փոքր բարձր մակարդակի է հասել: Այժմ նրանց ռուսաց լեզվի իմացությունը ավելի բարձր է նրանց անգլերենի իմացության մակարդակից (3,25 ընդդեմ 3,09-ի), և բուհ ընդունվելիս նրանք ունեցել են ռուսերենի ավելի լավ գիտելիքներ, քան՝ անգլերենի (2,64 ընդդեմ 2,41-ի):

Հարկ է նշել, որ չնայած մեկ տարում ՀՖԿՍՊԻ 1-ին կուրսի ուսանողների մոտ ռուսաց և անգլերեն լեզուների իմացության մակարդակների նշանակալից աճ է դիտվում, սակայն ըստ ուսանողների ինքնագնահատման արդյունքների, այդ լեզուների իմացության միջին ցուցանիշը (3,25 ռուսերենի և 3,09 անգլերենի համար) դեռ «լավ» (4 միավոր) համարվել չի կարող:

Ուսանողների 59%-ը համարում է, որ 1-ին կուրսում նրանք անգլերենի որոշ գիտելիքներ ստացել են, բայց դրանք դեռևս բավարար չեն իրենց մասնագիտության մեջ ազատ հաղորդակցվելու համար (տե՛ս գծապատկեր 7): Ռուսաց լեզվի վերաբերյալ ուսանողների 46%-ն է նման տեսակետ արտահայտել (տե՛ս գծապատկեր 8):

Հարցվածների 21%-ն է նշել, որ լավ կամ ազատ տիրապետում է անգլերենին, և 27%-ը լավ, կամ ազատ տիրապետում է ռուսերենին: Հետևաբար, հետագա (2-րդ և ավելի բարձր) կուրսերում այդ լեզուների իմացության կատարելագործման անհրաժեշտություն կա:

«Ընդհանուր առմամբ, որքանո՞վ է բարելավվել Ձեր անգլերենի իմացությունը ՀՖԿՍՊԻ-ում սովորելու ժամանակ»

Գծապատկեր 7



«Իսկ որքանո՞վ է բարելավվել Ձեր ռուսերենի իմացությունը ՀՖԿՍՊԻ-ում սովորելու ժամանակ»

Գծապատկեր 8



Օտար լեզուներին տիրապետելու հմտությունների զարգացման վրա ազդող գործոնները

Ինչպես երևում է 9-րդ և 10-րդ գծապատկերներից, անգլերեն և ռուսաց լեզուների իմացության կատարելագործումը ուսանողները կապում են ինչպես բուհում այդ լեզուների լավ դասավանդման, այնպես էլ ինքնակրթության հետ:

«Ինչի՞ արդյունքում եք կատարելագործել անգլերենի Ձեր իմացությունը»
Գծապատկեր 9



«Իսկ Ձեր ռուսերենի իմացությունը ինչի՞ արդյունքում եք կատարելագործել»
Գծապատկեր 10



ՀՖԿՍՊԻ բակալավրիատի 1-ին կուրսում անգլերեն և ռուսերեն դասավանդող դասախոսների արհեստավարժության գնահատումն ուսանողների կողմից

«Ձեզ դասավանդող անգլերենի դասախոսն արհեստավա՞րժ էր»
Գծապատկեր 11



Հարցված 1-ին կուրսեցիների 96,5%-ը համարում է, որ իրենց դասավանդած անգլերենի դասախոսը «շատ արհեստավարժ» է եղել, իսկ 2,9%-ը՝ «որոշ չափով է արհեստավարժ եղել» (տե՛ս *գծապատկեր 11)* : Ռուսաց լեզվի դասախոսներին «շատ արհեստավարժ» է համարել հարցվածների 95,3%-ը, և «որոշ չափով արհեստավարժ»՝ 2,4%-ը (տես՝ *գծապատկեր 12)* :

Առավել բարձր (10-ից ավելի պատասխանողի կողմից դրական գնահատված) արհեստավարժության գնահատականներ ստացած ռուսաց լեզվի դասախոսներն են՝

1. Բարսեղյան Անահիտ (27 միավոր)
2. Մուրադյան Նաիրա (21 միավոր)
3. Բախչոյան Անի (17 միավոր)
4. Դաշյան Նաիրա (14 միավոր)

Անգլերենի ավելի շատ դասախոսներ են ստացել 10-ից բարձր թվով ուսանողների կողմից դրական գնահատականներ: Նրանք են՝

1. Սինանյան Աննա (26 միավոր)
2. Մինասյան Իրինա (22 միավոր)
3. Սահակյան Գայանե (19 միավոր)
4. Հակոբյան Վարդիթեր (19 միավոր)
5. Հովակիմյան Սիլվա (14 միավոր)
6. Կարապետյան Տաթևիկ (13 միավոր)

7. Ներսեսյան Անի (12 միավոր)
8. Աթանեսյան Նաիրա (11 միավոր)

«Ձեզ դասավանդող ռուսաց լեզվի դասախոսն արհեստավա՞րժ էր»

Գծապատկեր 12



Օտար լեզուների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը բուհում

«Անգլերենի դասերին ուսանողների գիտելիքներն օբյեկտի՞վ են գնահատվում»

Գծապատկեր 13



1-ին կուրսի ուսանողների 74%-ը համարում է, որ անգլերենի դասերին իրենց գիտելիքներն օբյեկտիվ են գնահատվում բուհում, 20%-ը համարում է, որ հիմնականում/մեծամասամբ օբյեկտիվ են գնահատվում, իսկ 3%-ը գտնում է, որ երբեմն օբյեկտիվ են գնահատավում, երբեմն՝ ոչ (տե՛ս *գծապատկեր 13)* :

Ռուսաց լեզվի դասերի գնահատման օբյեկտիվության վերաբերյալ գրեթե նույնպիսի պատասխաններ են ստացվել՝ 1-ին կուրսի ուսանողների 77%-ն համարում է, որ ռուսաց լեզվի դասերին իրենց գիտելիքներն օբյեկտիվ են գնահատվում, 19%-ը համարում է, որ հիմնականում/մեծամասամբ օբյեկտիվ են գնահատվում, իսկ 2%-ը գտնում է, որ երբեմն օբյեկտիվ են գնահատավում, երբեմն՝ ոչ (տե՛ս *գծապատկեր 14)* :

«Բուհում Ձեր՝ ուսանողների գիտելիքներն օբյեկտի՞վ են գնահատվում ռուսաց լեզվի դասերին»
Գծապատկեր 14



Կրթական վերջնարդյունքների վերահսկման ու գնահատման ո՞ր մեթոդներն են ուսանողները նախընտրում

«Անգլերենի գիտելիքների/կարողությունների գնահատման ո՞ր համակարգն եք նախընտրում»
Գծապատկեր 15



Այն հարցին, թե բուհում անգլերեն լեզվի իմացության գնահատման որ համակարգն են նախընտրում 1-ին կուրսեցիները, ստացվել են հետևյալ պատասխանները՝ բանավոր

քննությունները (65%), թեստերի կիրառմամբ գրավոր քննություններ (33%), գրավոր քննություններ ազատ շարադրմամբ (5%) և բոլորը միասին՝ 12%: Ռուսաց լեզվի գնահատման համար գրեթե նույնատիպ պատասխաններ են ստացվել (տե՛ս գծապատկեր 15):

Հարկ է նշել, որ այս հարցերի համար յուրաքանչյուր պատասխանող ընտրել է մեկ կամ ավելի պատասխանի տարբերակ, ուստի, պատասխանների ընդհանուր հանրագումարն անցնում է 100%-ից:

«Ռուսաց լեզվի գիտելիքների գնահատման ո՞ր համակարգն եք նախընտրում»

Գծապատկեր 16



Ուսանողների առաջարկությունները ՀՖԿՍՊԻ–ում անգլերեն և ռուսերենի դասավանդման որակի հետագա բարձրացման ուղղությամբ

Ի՞նչ առաջարկություններ ունեք ՀՖԿՍՊԻ–ում անգլերենի դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ

- ✓ Ամեն ինչ իդեալական է (լիարժեք է /նորմալ է) /4/
- ✓ Կազմակերպել ուսանողների գիտելիքների մակարդակների համապատասխան դասավանդում /4/
- ✓ Ավելի շատ անգլերենի դասեր անցկացնել /2/
- ✓ Բարձր կուրսում ուսումնասիրել մասնագիտական անգլերեն
- ✓ Ցածր գիտելիքներով ուսանողների համար օտար լեզվի առանձին խմբեր ունենալ
- ✓ Շնորհակալ եմ համբերատար դասախոս ունենալու համար
- ✓ We need more spoken English practice. If it's possible to communicate with national speakers
- ✓ Հավաքականների համար առանձին անգլերենի քննարկումներ անցկացնել
- ✓ Կառաջարկեմ հանել թեստով քննությունները, որպեսզի բանավոր խոսքդ էլ գնահատվի: Կարծում եմ բանավոր խոսքում դա կարևոր է, իսկ թեստով մեխանիկորեն բոլորը բարձր են ստանում:

- ✓ Դասաժամերի ավելացումը, քանի որ լրագրողների համար օտար լեզուների տիրապետումը շատ կարևոր է: Նաև անգլերեն գրականություն տրամադրվի մեզ:
- ✓ Եթե բոլոր դասախոսները դասավանդեն Մինասյան Իրինայի նման՝ որակը անշուշտ ապահովված է:
- ✓ Զարգացնել բանավոր հաղորդակցման հմտությունները:
- ✓ Ըստ կարողությունների դասավանդում լինի
- ✓ Թարգմանությունները և քննարկումները շատացնել
- ✓ Իմ գիտելիքների հետ կապված այս մեկ տարին եղավ կրկնություն, որը էլ ավելի ամրապնդեց իմ գիտելիքները: Նախընտրելի է մասնագիտական գործունեության ընթացքում օգտագործվող անգլերենը ուսուցանել:
- ✓ Լավ կլիներ շատ քննարկումներով անցներ դասը
- ✓ Լավացնել հաղորդակցման հմտությունները, ուսումնասիրել մասնագիտական տերմինաբանությունը անգլերենով
- ✓ Լինեն անգլերեն պարապելու լրացուցիչ խմբեր
- ✓ Խնդրում եմ տարբերակեք լավ ու վատ կամ միջին մակարդակի լեզուն իմացողներին
- ✓ Խոսակցական անգլերենի դասընթացներ (more & more)
- ✓ Կարծում եմ եթե շատ չբացակայեի, ավելի լավ արդյունք կունենայի
- ✓ Կարծում եմ լեզվին լավ տիրապետելու համար պետք է ուսուցումը լինի շարունակական, երբեմն այլ առարկաների հանձնարարականները պետք է լինեն օտարալեզու գրականությունից, որ թարգմանելու միջոցով մենք էլ լեզուն օգտագործենք և պահպանենք մեր գիտելիքները
- ✓ Մասնագիտական թեմաների շուրջ քննարկումներ կազմակերպել
- ✓ Շատ լինի բանավոր շփում, քննարկում
- ✓ Շատ մասնագիտական ուղղվածության քննարկումների անցկացում
- ✓ Շեշտը դնել թարգմանություններ կատարելու վրա
- ✓ Ցանկալի է, որ քննարկումները լինեն ուղղված կոնկրետ մարզաձևի բնորոշ իրավիճակներին
- ✓ Փոխել դասապրոցեսի ձևը:

Ի՞նչ առաջարկություններ ունեք ՀՖԿՍՊԻ–ում ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ

- ✓ Ամեն ինչ իդեալական է, բարձր որակի (լիարժեք է /նորմալ է) /6/
  Կատարել շատ թարգմանչական հանձնարարություններ /4/
- ✓ Դասաժամերի ավելացում և ռուսաց լեզվի գրականության տրամադրում
- ✓ Դասավանդել ըստ լեզվին տիրապետելու կարողության մակարդակի
- ✓ Դասի ժամանակ մենք ընտրենք ինչ որ թեմա ու քննարկենք ռուսերեն լեզվով
- ✓ Երկրոդ կուրսում ուսուցանել մասնագիտական օտար լեզու թեկուզ փորքիկ առաջադրանքների կամ օտարալեզու գրականության ուսումնասիրությամբ
- ✓ Ռուսաց լեզվի քննությունը ևս անցկացնել բանավոր կամ տեքստերի բանավոր թարգմանությամբ գնահատել ուսանողներին
- ✓ Քննարկումներ լինեն, թարգմանությունների առաջադրանքներ տան մեզ:
- ✓ Անհատապես դասախոսները շատ աշխատեն մեզ հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, առաջին կուրսի ուսանողները որոշակի առաջընթաց են գրանցել ռուսերեն և անգլերեն լեզուների գիտելիքների բարելավման առումով, սակայն, համաձայն ուսանողների ինքնագնահատման արդյունքների, ներկա պահին (1-ին կուրսի ավարտին) այդ լեզուների իմացությունը շարունակում է մնալ միջինում ցածր (որոշ դեպքերում նաև՝ անբավարար): Հետևաբար, ***անհրաժեշտ է շարունակել ռուսաց և անգլերեն լեզուների դասավանդումը բակալավրիատի հետագա կուրսերում***, որը ՀՖԿՍՊԻ ուսանողներին հնարավորություն կտա յուրացնելու մասնագիտական գրականությունը, բարելավելու խոսակցական անգլերենը/ռուսերենը, մասնակցելու միջազգային գիտաժողովների, դասընթացների, մրցումների, ինչպես նաև հաղորդակցվելու արտասահմանյան գործընկերների և այլոց հետ:

Բակալավրիատի առաջին կուրսում (առկա ուսուցման ձև) դասավանդող/դասավանդած անգլերեն և ռուսաց լեզուների դասախոսներից շատերի արհեստավարժությունը բարձր է գնահատվել ուսանողների կողմից, ուստի, ***անհրաժեշտ է վերջիններիս ընդգրկել (հատկապես առավել բարձր գնահատականներ ստացած դասախոսներին) հետագա կուրսերում դասավանդման մեջ:***

ՀՖԿՍՊԻ–ում անգլերեն և ռուսաց լեզուների տիրապետման գիտելիքների/կարողությունների գնահատման համար ***անհրաժեշտ է կիրառել ինչպես բանավոր քննությունների, այնպես էլ թեստերի կիրառմամբ գրավոր քննությունների անցկացման տարբերակները:***

Անհրաժեշտ է նաև ***խթանել լեզուների բանավոր/խոսակցական հմտությունների զարգացումը՝*** երկխոսությունների, հարց ու պատասխանների, քննարկումների և այլ մեթոդների կիրառմամբ: Իսկ լեզվի գրավոր կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է ուսանողներին տրվող առաջադրանքներում, ինչպես նաև քննությունների հարցերում ներառել գրավոր թարգմանություններ:

Ուսանողների առաջարկությունների, ինչպես նաև միջազգային պրակտիկայում կիրառվող արդյունավետ ուսուցման մեթոդաբանության համաձայն, ***անհրաժեշտ է տարբերակել անգլերեն և ռուսաց լեզուների ուսուցման խմբերը՝ ըստ ուսանողների գիտելիքների մակարդակի***: Վերջինիս համար անհրաժեշտ կլինի նախ մշակել լեզուների ուսուցման տարբերակված ծրագրեր (ցածր, միջին և բարձր գիտելիքներ ունեցողների համար), ապա՝ ուսումնական տարվա սկզբում անցկացնել բոլոր ուսանողների գիտելիքների թեստավորում այդ լեզուներից և այնուհետև նրանց ընդգրկել ուսուցման համապատասխան խմբերում:

Վերջապես, հնարավորության դեպքում անհրաժեշտ է ավելացնել հատկապես անգլերեն լեզվի դասաժամերը, քանի որ այն հանդիսանում է ավելի լայն կիրառում ունեցող

կրթագիտական միջազգային լեզու, և կարևորվում այն փաստը, որ վերջին տասնամյակներում անգլերենը շատ երկրների կրթական հաստատություններում դարձել է հիմնական լեզուներից մեկը, որը սովորողների համար կրթական նոր հեռանկարների հնարավորություններ է ստեղծում:

Անհրաժեշտ է նաև ՀՖԿՍՊԻ ***գրադարանը համալրել անգլերեն և ռուսաց լեզուների նոր ուսումնական ձեռնարկներով և գիտատեղեկատվական հրատարակություններով***՝ ներառյալ մասնագիտական գրականությամբ:

Հավելված 1

ՀՖԿՍՊԻ-ում օտար լեզուների դասավանդման/ուսուցման արդյունավետության գնահատում

Հարգելի՝ ուսանող , Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում (ՀՖԿՍՊԻ) բակալավրիատի 1-ին կուրսում ներդրված անգլերեն և ռուսերեն լեզուների ուսուցման արդյունավետության գնահատման նպատակով խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին: Հարցումն անանուն է և Ձեր անկեղծ պատասխանները մեզ կօգնեն բարելավելու օտար լեզուների ուսուցման արդյունավետությունը:

1. 1. Նշեք խնդրեմ Ձեր ուսուցման համակարգը

Mark only one oval.

- Բակալավրիատ - առկա

2. 2. Ո՞ր կուրսում եք սովորում

Mark only one oval.

- 1-ին

3. 3. Ո՞ր ֆակուլտետում եք սովորում

Mark only one oval.

- Առողջ. տեխնոլոգ., սպորտային տուրիզմի և կառավարման
- Մարզչամանկավարժական

4. 4. Ի՞նչ որակավորում եք ստանալու ՀՖԿՍՊԻ-ում.

Mark only one oval.

- կինեզիոլոգ
- լրագրող
- մարզիչ-մանկավարժ

5. 5. Ձեր սեռը

Mark only one oval.

- արական
- իգական

6. 6ա. Ինչպե՞ս եք գնահատում մինչև ԲՈՒՀ ընդունվելը անգելերեն լեզվի Ձեր իմացության մակարդակը

Mark only one oval per row.

	0 - ոչինչ չգիտեի	1- տարրական մակարդակ	2 -միջին	3 - լավ	4 - գերազանց
Ազատ խոսելու/ հաղորդակցվելու հմտությունները					
Վարժ գրելու հմտությունները					
Ազատ կարդալու հմտությունները					

7. 6բ. Իսկ ինչպե՞ս եք գնահատում մինչև ԲՈՒՀ ընդունվելը ռուսերեն լեզվի Ձեր իմացության մակարդակը

Mark only one oval per row.

	0 - ոչինչ չգիտեի	1- տարրական մակարդակ	2 -միջին	3 - լավ	4 - գերազանց
Ազատ խոսելու/ հաղորդակցվելու հմտությունները					
Վարժ գրելու հմտությունները					
Ազատ կարդալու հմտությունները					

8. 7ա. Ներկա պահին անգելերեն լեզվի Ձեր իմացության մակարդակը ինչպե՞ս կգնահատեիք.

Mark only one oval per row.

	0 - ոչինչ չգիտեմ	1- տարրական մակարդակ	2 -միջին	3 - լավ	4 - գերազանց
Ազատ խոսելու/ հաղորդակցվելու հմտությունները					
Վարժ գրելու հմտությունները					
Ազատ կարդալու հմտությունները					

9. 7բ. Իսկ ներկա պահին ռուսերեն լեզվի Ձեր իմացության մակարդակը ինչպե՞ս կգնահատեիք.

Mark only one oval per row.

	0 - ոչինչ չգիտեմ	1- տարրական մակարդակ	2 -միջին	3 - լավ	4 - գերազանց
Ազատ խոսելու/ հաղորդակցվելու հմտությունները					
Վարժ գրելու հմտությունները					
Ազատ կարդալու հմտությունները					

10. 8ա. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ է բարելավվել Ձեր անգլերենի իմացությունը ՀՖԿՍՊԻ-ում սովորելու ժամանակ

Mark only one oval.

- Անգլերենի որոշ գիտելիքներ ստացել եմ, բայց դա դեռ բավարար չի մասնագիտությանս մեջ ազատ հաղորդակցվելու համար
- Այժմ ավելի լավ եմ տիրապետում մասնագիտական անգլերենին, կարող եմ որոշ մտքեր արտահայտել գրավոր կամ բանավոր
- Այժմ շատ լավ եմ տիրապետում մասնագիտական անգլերենին. կարող եմ բավականին մտքեր արտահայտել թե գրավոր, թե բանավոր
- Այժմ ազատ տիրապետում եմ անգլերենին. կարող եմ խոսել , կարդալ, կամ գրել ինչ ցանկանամ
- Անգելերենից գրեթե ոչինչ չեմ սովորել, որն օգտակար կլինի մասնագիտությանս մեջ

11. 8բ. Իսկ որքանո՞վ է բարելավվել Ձեր ռուսերենի իմացությունը ՀՖԿՍՊԻ-ում սովորելու ժամանակ

Mark only one oval.

- Ռուսերենի որոշ գիտելիքներ ստացել եմ, բայց դա դեռ բավարար չի մասնագիտությանս մեջ ազատ հաղորդակցվելու համար
- Այժմ ավելի լավ եմ տիրապետում մասնագիտական ռուսերենին, կարող եմ որոշ մտքեր արտահայտել գրավոր կամ բանավոր
- Այժմ շատ լավ եմ տիրապետում մասնագիտական ռուսերենին. կարող եմ բավականին մտքեր արտահայտել թե գրավոր, թե բանավոր
- Այժմ ազատ տիրապետում եմ ռուսերենին. կարող եմ խոսել , կարդալ, կամ գրել ինչ ցանկանամ
- Ռուսերենից գրեթե ոչինչ չեմ սովորել, որն օգտակար կլինի մասնագիտությանս մեջ

12. 9ա. Ինչի՞ արդյունքում եք կատարելագործել անգլերենի Ձեր իմացությունը

Check all that apply.

- [ ] ԲՈՒՀ-ում անգլերենի լավ դասավանդման արդյունքում
- [ ] Ինքնուրույն աշխատանքի արդյունքում
- [ ] Մինչև ԲՈՒՀ ընդունվելն արդեն բավականին լավ էի տիրապետում անգլերենին
- [ ] Բոլորովին չեմ կատարելագործել

13. 9բ. Իսկ Ձեր ռուսերենի իմացությունը ինչի՞ արդյունքում եք կատարելագործել

Check all that apply.

- [ ] ԲՈՒՀ-ում ռուսաց լեզվի լավ դասավանդման արդյունքում
- [ ] Ինքնուրույն աշխատանքի արդյունքում
- [ ] Մինչև ԲՈՒՀ ընդունվելն արդեն բավականին լավ էի տիրապետում ռուսաց լեզվին
- [ ] Բոլորովին չեմ կատարելագործել ռուսերենի իմացությունս ԲՈՒՀ-ում

14. 10. Նշեք խնդրեմ ԲՈՒՀ-ում Ձեր անգլերենի դասախոսի անուն, ազգանունը

Mark only one oval.

- ( ) Սինանյան Աննա
- ( ) Մինասյան Իրինա
- ( ) Հովակիմյան Սիլվա
- ( ) Աթանեսյան Նաիրա
- ( ) Ներսեսյան Անի
- ( ) Հակոբյան Վարդիթեր
- ( ) Մուրադյան Քրիստինա
- ( ) Կարապետյան Տաթևիկ
- ( ) Գրիգորյան Ալիսա
- ( ) Հայրապետյան Լիլիթ
- ( ) Երզնկյան Նորա
- ( ) Սահակյան Գայանե
- ( ) Հակոբյան Լիանա
- ( ) Խաչատրյան Քրիստինա
- ( ) Գրիգորյան Աշխեն

15. 11. Ձեզ դասավանդող անգլերենի դասախոսն արհեստավա՞րժ էր:

Mark only one oval.

- Այո, շատ
- Այո, որոշ չափով
- Ոչ

16. 12. ԲՈՒՀ-ում ուսանողների գիտելիքներն օբյեկտի՞վ են գնահատվում անգլերենի դասերին

Mark only one oval.

- Այո, միշտ
- Մեծամասամբ ԱՅՈ
- Երբեմն ԱՅՈ, երբեմն ՈՉ
- Ոչ, երբեք
- Դժվարանաում եմ պատասխանել

17. 13. ԲՈՒՀ-ում անգլերենի գնահատման ո՞ր համակարգն եք նախընտրում.

Check all that apply.

- [ ] Գրավոր քննություններ ազատ շարադրմամբ
- [ ] Գրավոր քննություններ թեստերի կիրառմամբ
- [ ] Բանավոր քննություններ
- [ ] Բոլորը միասին
- [ ] Այլ պատասխան /նշեք ստորև/

18. Այլ պատասխան

19. 14. Ի՞նչ առաջարկություններ ունեք ԲՈՒՀ-ում անգլերենի դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ

20. 15. Նշեք խնդրեմ ԲՈՒՀ-ում Ձեր ռուսաց լեզվի դասախոսի անուն, ազգանունը

Mark only one oval.

- Բախչոյան Անի
- Մուրադյան Նաիրա
- Ալեքսանդրյան Նինա
- Մարտիրոսյան Անի
- Զուրաբյան Անահիտ
- Լիլոյան Էլմիրա
- Օկսանա Կուզինա
- Տեր-Հովհաննիսյան Քնարիկ
- Դաշյան Նաիրա
- Բարսեղյան Անահիտ
- Ազարյան Նաիրա
- Սահակյան Իրինա
- Աղաբալյան Սվետլանա
- Ստեփանյան Մարինա
- Գրիգորյան Ինեսա

21. 16. Ձեզ դասավանդող ռուսաց լեզվի դասախոսն արհեստավա՞րժ էր:

Mark only one oval.

- Այո, շատ
- Այո, որոշ չափով
- Ոչ

22. 17. ԲՈՒՀ-ում Ձեր՝ ուսանողների գիտելիքներն օբյեկտի՞վ են գնահատվում ռուսաց լեզվի դասերին

Mark only one oval.

- Այո, միշտ
- Մեծամասամբ ԱՅՈ
- Երբեմն ԱՅՈ, երբեմն ՈՉ
- Ոչ, երբեք
- Դժվարանաում եմ պատասխանել

23. 18. ԲՈՒՀ-ում ռուսաց լեզվի գնահատման ո՞ր համակարգն եք նախընտրում.

Check all that apply.

- [ ] Գրավոր քննություններ ազատ շարադրմամբ
- [ ] Գրավոր քննություններ թեստերի կիրառմամբ
- [ ] Բանավոր քննություններ
- [ ] Բոլորը միասին
- [ ] Այլ պատասխան /նշեք ստորև/

24. Այլ պատասխան

25. 19. Ի՞նչ առաջարկություններ ունեք ԲՈՒՀ-ում ռուսաց լեզվի դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ

This content is neither created nor endorsed by Google.

Google Forms